ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Անանիքս ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/2 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Ձեռքի մետաղորսիչ սարք՝ զգայունություն և հայտնաբերման հնարավորություններ - Մետաղների տեսակներ, բացարձակ հավասարաչափ զգայունություն ինչպես մագնիսական (սև մետաղներ՝ երկաթ, պողպատ), այնպես էլ ոչ մագնիսական (գունավոր մետաղներ՝ ալյումին, պղինձ, արծաթ, ոսկի, տիտան, չժանգոտվող պողպատ) մետաղների և դրանց համաձուլվածքների նկատմամբ: - Հայտնաբերման սահմանային հեռավորություններ. 1. Խոշոր մետաղական առարկաներ (ատրճանակ, դանակ, սառը զենք): 15 - 22 սմ 2. Միջին չափի առարկաներ (բանալիներ, գրպանի դանակներ, բջջային հեռախոսներ): 10 - 15 սմ 3. Փոքր և գերփոքր առարկաներ (SIM քարտեր, հեռախոսի պլատաներ, փոքր ածելիներ, կոտրված սայրեր): 2.5 - 7.6 սմ - Սկանավորման դաշտ՝ 360 աստիճան զոնդի ամբողջ երկայնքով: Սարքը պետք է հավասարապես արձագանքի թեքության ցանկացած անկյան տակ: - Ճշգրիտ տեղորոշում՝ Օպտիմալացված է սարքի ծայրամասային (քթային) հատվածով առարկայի ստույգ տեղադրությունը որոշելու համար: Ազդարարման և ինդիկացիայի համակարգ Սարքը պետք է համալրված լինի երեք տեսակի անկախ ազդանշանային համակարգերով. 1. Ձայնային ազդանշան: Բարձր հստակության տոնալ ձայն, որի ինտենսիվությունը/բարձրությունը կարող է փոխվել՝ կախված առարկայի չափսից: Պետք է առկա լինի ականջակալների միացման հնարավորություն (3.5 մմ): 2. Վիբրացիոն (թրթռումային) ազդանշան: Ուժեղ և զգալի թրթռում բռնակի հատվածում: 3. Լուսադիոդային (LED) ինդիկացիա՝ -կանաչ լույս՝ սարքը միացված է և պատրաստ է աշխատանքի: -կարմիր լույս՝ մետաղի հայտնաբերում: -դեղին/նարնջագույն լույս՝ մարտկոցի ցածր լիցքավորման մակարդակ: Էլեկտրամագնիսական համատեղելիություն և խանգարումների պաշտպանություն - Աշխատանքային

	հաճախականություն՝ 22 կՀց-ից մինչև 95 կՀց միջակայքում: - Խանգարումների ճնշում՝ սարքը պետք է ունենա ներկառուցված ֆիլտրեր, որոնք թույլ չեն տալիս կեղծ ազդանշաններ արձակել էլեկտրական հոսանքի լարերի, համակարգիչների կամ կամարային մետաղորսիչների էլեկտրամագնիսական դաշտի ազդեցության տակ: Էներգասնուցում - Մարտկոցի տեսակը՝ ստանդարտ 9V (Ալկալային) մարտկոց կամ վերալիցքավորվող Ni-MH կուտակիչ: - Աշխատանքային ժամանակ. 1. Ալկալային մարտկոցով՝ ոչ պակաս, քան 100 ժամ անդադար աշխատանք: 2. Վերալիցքավորվող կուտակիչով՝ ոչ պակաս, քան 60-80 ժամ: Ֆիզիկական և էրգոնոմիկ բնութագրեր - Պատյանի նյութը՝ հարվածակայուն, հակահիդեհային կառուցվածքով ABS պլաստիկ կամ ամրացված պոլիկարբոնատ: - Պաշտպանվածության դաս՝ առնվազն IP64 (ամբողջական պաշտպանություն փոշուց և ջրի ցայտերից): - Քաշը չետք է գերազանցի 500 գրամը (ներառյալ մարտկոցը): - Չափսերը՝ երկարություն՝ 38-46 սմ, լայնություն՝ ոչ ավել, քան 9 սմ: - Աշխատանքային ջերմաստիճան՝ -37°C-ից մինչև +70°C: Երաշխիքի ժամկետներ Սարքերի հիմնական էլեկտրոնային բլոկների և որոնողական կոճերի համար երաշխիքը պետք է կազմի 1 տարի, ներառելով գործարանային թերությունները և էլեկտրոնային համակարգի անսպասելի խափանումները՝ բնականոն օգտագործման պայմաններում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ананикс ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/2 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	